13485

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«10» 10 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0153-22

Ձեռնարկողը՝ ***«ԷՄ ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ***
ք. Երևան, Բաղյան 1-ին նրբ., 6/6

Գործունեությունը՝ ***«Մարմաշեն վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում և հարակից տարածքի բարեկարգում» ենթածրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0153-22

«10» 10 2022թ.

«Մարմաշեն վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում և հարակից տարածքի բարեկարգում» ենթածրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ԷՄ ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	- Գնահատման հաշվետվություն (Բ կատեգորիա) - Նախագծային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, Վահրամաբերդ բնակավայր

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ֆինանսավորմամբ՝ «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» իրականացման նպատակով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը Բ կատեգորիայի է:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է պահպանել պատմամշակութային կառույցը, ստեղծել տեղաբնիկների և զբոսաշրջիկների համար բարեկարգ հանրային ենթակառուցվածքներ, ավելացնել տարածաշրջանում զբոսաշրջային այցելությունների քանակը և նրանց մնալու տևողությունը, նպաստել Ախուրյան համայնքի գյուղական բնակավայրերում զբոսաշրջությունից ստացվող եկամուտների աճին:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Շիրակի մարզի Ախուրյան խոշորացված համայնքի Վահրամաբերդ բնակավայրում: Վանական համալիրը գտնվում է բնակավայրից դեպի հարավ 2.4կմ հեռավորության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Ախուրյան գետի ձախափնյա բարձրադիր վերողողահունային դարավանդի վրա, որը դեպի արևմուտք անցնում է դելուվիալ լանջի: Ռելիեֆն անհարթ է՝ ընդհանուր թեքությամբ արևմուտքից-արևելք: Մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 1530-1540մ սահմաններում: Տեղամասի բուսականությունը տափաստանային է՝ ներկայացված կծմախոտային տափաստաններով, ինչպես նաև կուլտուրականացված

ծառատեսակներով և թփերով: Ստորգետնյա (գրունտային) ջրերն ուսումնասիրվող տարածքում բացահայտվել են 4.0 և 4.4մ խորությունների վրա:

Շիրակի մարզում գերակշռում են բերրի հողերի կարբոնատ, տիպիկ բերրի հողեր, բերրի մարմարազերծ, գետահովիտ-մարգագետնային հողեր: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Մարմաշենի շերտախումբը ներկայացված է կավերով, ավազային կավերով, գրավելիտներով և մանր բեկորային խճանման առաջացումներով:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1556-II կլիմայական գոտում, որտեղ հուլիսին օդի միջին ջերմաստիճանը 19.5°C աստիճան է: Ամենացուրտ ամսվա միջին ջերմաստիճանը -9.0°C է: Տարեկան տեղումների քանակը կազմում է 498մմ:

Մարզը հարուստ է պատմամշակույթային, հնագիտական հուշարձաններով, բուսական և կենդանական աշխարհի խիստ բազմազանությամբ, մարզում հանդիպում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող կենդանական և բուսական տեսակներ: Գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված կենդանական և բուսական տեսակներ չկան:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ ենթածրագրի իրականացման վայրը Մարմաշեն վանական համալիրն է, որի պահպանման տարածքը կազմում է մոտ 0.27283հա:

Մարմաշեն վանական համալիրը գտնվում է Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղից 2,4կմ հարավ-արևմուտք Ախուրյան գետի ձախ ափին: Մարմաշենն իր ճարտարապետական հորինվածքով նմանվում է Անիի Մայր տաճարին (X դ.): Վանքային համալիրը բաղկացած է 3 եկեղեցուց և գավթից: Վանքի տարածքում է գտնվում գերեզմանոց, ինչպես նաև՝ հին կառույցների և խաչքարերի բեկորներ:

Համաձայն գնահատման հաշվետվության ենթածրագրով նախատեսվում է՝

1. հիմնանորոգել դեպի վանական համալիր տանող գոյություն ունեցող ճանապարհը:
2. կառուցել ավտոկայանատեղի:
3. բարեկարգել «Հեղնար աղբյուր»-ը:
4. կառուցել տաղավարներ և սանհանգույց:

Նախատեսվող գործունեության իրականացման շրջանակներում նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝

- Մարմաշեն վանական համալիրի հուշարձանի տարածքում՝ Ախուրյան գետի ափամերձ հատվածում, նախատեսվում է իրականացնել դիտահարթակի կառուցում, դեպի դիտահարթակ արահետների ու մոտեցման ապահովում, նստարանների, աղբամանների տեղադրում, պահակակետի կառուցում, եկեղեցիների գեղարվեստական և տարածքի լուսավորության ցանցի իրականացում:
- Նախատեսվում է վանքի տարածքը մակերևութային ջրերից պաշտպանող դրենաժային համակարգի կառուցում: Վանական համալիրի տարածքում մակերևութային ջրերից պաշտպանելու համար նախատեսված են լանջային առուներ /L=200մ/՝ ե/բետոնե միաձույլ վաքեր՝ երեսապատված բազալտե քարերով և մարմարիզացված կրաքարով՝ կից նախատեսվող արահետներին, 200մմ տրամագծով գոֆրե խողովակներ /L=177մ/:
- Նախատեսվում է սանհանգույցի կառուցում, որը ապահովված է լինելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգով՝ լոկալ մաքրման կայանի միջոցով՝ 4մ^3/օր հաշվարկային հզորությամբ: Վերջինս ապակե պլաստիկե, հակակոռոզիոն նյութով պատված, գլանաձև տարողություն է՝ հագեցած սպասարկման հորով և կեղտաջրերի մաքրման տեխնոլոգիական սարքավորումներով, օգտագործվում է որպես ինքնավար

կոյուղու համակարգ: Մաքրման կայանում պարզեցված ջուրը նախատեսվում է օգտագործել վանական համալիրի և հարակից տարածքի կարիքների համար:

- Կառուցապատվող տարածքը բնակավայրից հեռու է 2.4կմ, ջրային տարածքից /Ախուրյան գետից/ փոխարինվող աստիճանը հեռու է 25մ, իսկ հասարակական կառուցապատվող տարածքից /սանհանգույց, ավտոկայանատեղի, տաղավարներ/՝ 220մ: Գետի ափամերձ հատվածում նախատեսվում է 48 գծմ երկարությամբ բազրիք՝ պաշտպանական նկատառումներով, որը ծառայելու է նաև որպես դիտարահարթակ:

- Ավտոկայանատեղիի մոտ և ճանապարհի անցումների մոտ նախատեսված են կույրերի համար տակտիլե սալիկներով երեսապատում:

- Ապամոնտաժվելու են բոլոր գոյություն ունեցող էլեկտրական սյուները և հանձնվելու են համայնքապետարանին:

Նախատեսվող աշխաանքների տեխնիկական նկարագիրն է՝

- Վանական համալիր տանող հիմնանորոգվող /ասֆալտապատվող/ ճանապարհի երկարությունն է 2.4կմ,
- Վանական համալիրի տարածքում բազալտե քարերով երեսապատվող արահետների մակերեսը՝ 782մ^2, մարմարիզացված կրաքարով երեսապատում՝ 610մ^2,
- Նոր կառուցվող ջրագծի երկարությունը՝ 2.4կմ,
- Ջրահեռացման լոկալ մաքրման կայանի հաշվարկային հզորությունը՝ 4մ^3/օր:
- Արտաքին լուսավորություն ցանցի և էլեկտրամատակարարման գծի երկարությունն է 2.4կմ:
- Հասարակական տարածքում /ավտոկայանատեղի, տաղավարների հատված/ լուսավորման ենթակա է 2050մ^2 մակերեսով տարածք,
- Վանական համալիրի և հանգստի գոտու լուսավորման ենթակա տարածքը՝ 1.69հա:
- Ավտոկայանատեղիի կառուցապատման մակերեսը՝ 1380մ^2,
- Սանհանգույցի և տաղավարների հարթակի կառուցապատման մակերեսը՝ 260մ^2:

Համաձայն հաշվետվության հասարակական նշանակության հողամասում կառուցապատումը կազմում է՝ 43%, իսկ վանական համալիրի տարածքում՝ 1%: Բնական լանդշաֆտը հիմնականում պահպանվում է, բուսականության հատում չի նախատեսվում, իսկ կառուցապատման հատվածում նախատեսվում է մինչև 10% կանաչապատում:

Համաձայն «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրված էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի՝ էլ. սնումը հնարավոր կլինի իրականացնել՝ տեղադրելով համապատասխան հզորության ենթակայան, որի սնումը կիրականացվի «Վահրամաբերդ» 110/35/10կՎ ԵԿ «Վանք» 10կՎ ուղղության ՏԵ 4099-ի 10կՎ ճյուղավորման վերջին հենասյունից՝ կառուցելով մոտ 2,6մ էլ. հաղորդման գիծ:

Համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի՝ նոր ջրագծի կառուցումն իրականացվելու է Վահրամաբերդ բնակավայրի Վահրամաբերդ 1-ին փողոցով անցնող d=100մմ տրամագծով ջրագծից 2.4կմ երկարությամբ նոր d=40մմ տրամագծով:

Համաձայն հաշվետվության շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից: Շինարարական նյութերից օգտագործվելու են ավազակոպճային խառնուրդ, խիճ, բիտում, ամրակցող նյութեր և այլն: Շինարարության ժամանակ ճանապարհի երկայնքով կառուցվելու են բազմաթիվ մեծ ու փոքր շինհրապարակներ (ընդհանուրը 800մ^2):

Համաձայն գնահատման հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են առավելագույնը 420 օր, որի ընթացքում օգտագործվելու են 24 տեխնիկական

ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՓՈՓ

միջոցներ՝ վերամբարձ կռունկ, ամբարձիչ, էքսկավատոր, ավտոինքնաթափ, գլդոն և այլն:

Աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովելու նպատակով շինհրապարակում նախատեսվում է աշղեկի շարժական տնակ, բիոզուգարան, հանդերձարան, ցնցուղարան, լվացարան, հանգստի սենյակ, սննդի ընդունման շարժական կետ, աշխատողների կարիքների համար անհրաժեշտ ջրի տարա:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինարարական տարածքի ջրցանման, հողի գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային և տնտեսական կարիքների համար (ընդհանուր 1994.68մ^3/տարի): Շինարարական աշխատանքներում և բանավորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը նախատեսվում է բերել տարրաներով՝ համապատասխան ջրօգտագործման թույլտվություն ունեցող կազմակերպության հետ կնքելով ջրամատակարարման պայմանագիր, և/կամ ծրագրի իրականացման տարածքում գտնվող «Հեղնար աղբյուրի» միջոցով:

Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ հողային աշխատանքների ծավալը հաշվարկված է 24.500մ^3 հանույթ, իսկ հետլիցք՝ 9000մ^3: Չօգտագործված հողային զանգվածը՝ 15500մ^3 Ախուրյանի համայնքապետարանի համաձայնությամբ կտեղափոխվի վայր: Նախատեսվող շինարարության ենթակա տեղանքը զուրկ է բերրի հողի շերտից և ծրագրի շրջանակներում հողի բերրի շերտի հանում և ժամանակավոր պահեստավորում չի նախատեսվում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը (մոտ 7տոննա), շինարարական աղբը և քանդված հանված հողային զանգվածի որոշ մաս, որը չի օգտագործվելու հետլիցքի նպատակով, ինչպես նաև ճանապարհի երկայնքով առկա՝ երկրաշարժից հետո մնացած շինարարական աղբը՝ 3400մ^3: Շինարարական թափոնները նախատեսվում է կանոնավոր տեղափոխել Ախուրյան համայնքապետարանի կողմից թույլատրված վայր:

Տարածքների ջրցանի և հողային զանգվածների խոնավացման արդյունքում արտահոսք չի առաջանում: Անձրևաջրերի և ձնհալքի հոսքերը հեռացվելու են տարածքում առկա դրենաժային համակարգի միջոցով: Տնտեսական կենցաղային հոսքաջրերի հաշվարկային քանակը կկազմի՝ 723.79մ^3/տարի:

Վանական համալիր տարածքում ոռոգման գիծ չի նախատեսվում, գոյություն ունեցող բնական ոռոգման առվի համար նախատեսվում են վաքեր՝ վանական համալիրի տարածքը ստորգետնյա ջրերից պաշտպանելու համար:

Հաշվետվությունում ներառված է այլընտրանքային վերլուծություն՝ ներկայացված տարբերակի հիմնավորումով:

Համաձայն հաշվետվության գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու հողային աշխատանքների՝ փորման, բեռնման-բեռնաթափման, սարքավորումների և շինարարական տեխնիկայի շահագործման արդյունքում օդային ավազան փոշու և ծխագազերի արտանետումների, աղմուկի մակարդակի բարձրացման, բետոնային աշխատանքների, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների հետ:

Նախատեսվում է օդային ավազանի, լանդշաֆտի, բուսական և կենդանական աշխարհի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի

մակարդակի կարգավորման, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ.

- շինարարության ընթացքում, օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով ջրցանի իրականացում օրական 2 (երկու) անգամ,
- շինարարության ընթացքում մթնոլորտային օդ փոշու արտանետումների հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ տեխնիկական սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, բացառելով՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,
- շինարարական նյութերի, կուտակումների ծածկում՝ օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից,
- քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում, դրանց հատուկ, փակ, անթափանց տարաներում պահում,
- շինհրապարակում ընդհանուր թափոններից հողի, շինարարական և կենցաղային աղբի տարանջատում, տեղափոխում հատուկ հատկացված աղբավայր,
- շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից և բացառվելու է տարածքից հեռացվող բուսականության բաց այրումը,
- արտակարգ իրավիճակների դեպքում համապատասխան կլանիչներով տարածքի մաքրում, աշխատողների անվտանգության ապահովում և այլն:

Բնապահպանական միջոցառումների գումարը կկազմի 4 մլն 247 հազար դրամ:

Փորձաքննական եզրահանգումներ. համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող կառուցապատված տարածքների սահմաններում: Նախատեսվող գործունեության իրականացման (շինարարության փուլ) հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները՝ պատմամշակութային վանական համալիրի, համայնքի, բնական լանդշաֆտի, կենսաբազմազանության և շրջակա միջավայրի այլ բաղադրիչների վրա լինելու են փոքրածավալ, կարճաժամկետ և տեղայնացված, կրելու են ժամանակավոր բնույթ: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում կստեղծվեն բարեկարգ, ժամանակակից զբոսաշրջային ենթակառուցվածքներ՝ պատմական, մշակութային ռեսուրսները համապատասխան ձևով ներկայացնելու համար, կբարելավեն ճանապարհային ցանցը և ինժեներական ենթակառուցվածքը, կապահովեն տրանսպորտի և զբոսաշրջային երթուղիների անխափան աշխատանքը և տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների և զբոսաշրջային օբյեկտների (հյուրատներ, ռեստորաններ և այլն) մատչելիությունը: Այս ամենը, իր հերթին կնպաստի Շիրակի մարզում զբոսաշրջության գրավչության մեծացմանը և տնտեսական աճին:

Մարզի բնակավայրեր այցելած զբոսաշրջիկների համար Մարմաշեն վանական համալիրը դառնալու է նոր կարևոր այցելության վայր, որն իր ձևաչափով նպաստելու է հարակից գյուղական բնակավայրերի կյանքի աշխուժացմանը և բնակիչների համար տնտեսական նոր հնարավորությունների ստեղծմանը:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Շիրակի մարզպետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննության բոլոր փուլերում Ախուրյան համայնքի Վահրամաբերդ բնակավայրում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել տարածքի սանիտարական նորմերի պահպանմանը, գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
- Ապահովել շինհրապարակների, մեքենաների սպասարկման տարածքների և շինարարական ճամբարների սահմանված հեռավորությունն Ախուրյան գետից, վանական համալիրից, պատմական արժեք ներկայացնող վայրերից:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի և ճանապարհների առավելագույն ծանրաբեռնվածությունը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության շինարարության ընթացքում ապահովել շրջակա միջավայրի, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության և տեխնիկական անվտանգության ՀՀ-ում գործող նորմերի պահանջները:
- Առաջնորդվել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՕ-261 օրենքով (11.10.1998թ.) սահմանված պահանջներով:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷՄ ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ «Մարմաշեն վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում և հարակից տարածքի բարեկարգում» ենթածրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան